ARM MARATHON FOUNDATION

"Arm Marathon" Foundation
Yerevan, Armenia
Tel: +374 55 88 66 37
Email: info@armeniamarathon.org

Երևանի քաղաքապետ,
Տիգրան Ավինյանին

Օգոստոսի 5, 2026

Հարգելի պարոն Ավինյան,

Շնորհակալություն ենք հայտնում Երևանի քաղաքապետարանին՝ «Երևան Մարաթոն» միջազգային վազքի կազմակերպման գործում բազմամյա համագործակցության և աջակցության համար:

Հաշվի առնելով, որ Երևան մարաթոնի միջոցառման անցկացումը համաձայնեցվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ, որը, հիմք ընդունելով Շրջակա միջավայրի նախարարության դիրքորոշումը և COP17-ի հետ կապված կազմակերպչական գործընթացները, աջակցել է «Երևան Մարաթոնի» անցկացմանը, իսկ միջոցառման իրականացման հետ կապված կազմակերպչական հարցերը նպատակահարմար է համարել քննարկել Երևանի քաղաքապետարանի հետ, առաջարկում ենք դիտարկել միջոցառման կազմակերպման հետևյալ փոփոխությունները:

Առաջարկում ենք միջոցառման հիմնական հատվածը Շահումյան հրապարակից տեղափոխել Զաքյան փողոց և հարակից այգու տարածք՝ այնտեղ կազմակերպելով նաև վազքի ավարտական գոտին: Այս տարբերակի դեպքում այլևս անհրաժեշտ չի լինի երկար ժամանակով փակ պահել Հանրապետության հրապարակն ու հարակից կենտրոնական փողոցները:

Վազորդները քաղաքի կենտրոնական փողոցներով կանցնեն միայն մեկ անգամ՝ առավոտյան ժամերին, որից անմիջապես հետո տվյալ փողոցները հնարավոր կլինի ամբողջությամբ վերաբացել երթևեկության համար: Սա թույլ կտա էապես նվազեցնել երթևեկության սահմանափակումների տևողությունը և միջոցառման ազդեցությունը քաղաքի բնականոն աշխատանքի վրա:

12 կմ, 21 կմ և 42 կմ հիմնական մրցատարածությունները առաջարկում ենք անցկացնել հոկտեմբերի 18-ին՝ կից ներկայացված նոր երթուղով:

Ինչ վերաբերում է 1 կմ (մանկական վազք) և 5 կմ մրցատարածություններին, առաջարկում ենք դիտարկել հետևյալ տարբերակներից մեկը.

- պահպանել դրանց անցկացումը հոկտեմբերի 17-ին՝ Հրազդանի կիրճում,
- կամ, անհրաժեշտության դեպքում, անցկացնել դրանք հոկտեմբերի 18-ին՝ Երևանի կենտրոնում՝ հիմնական մեկնարկային և ավարտական գոտուց:

Երկրորդ տարբերակի ընտրության դեպքում նշված մրցատարածությունների երթուղիները և դրանց կազմակերպման հետ կապված լուծումները պատրաստ ենք լրացուցիչ քննարկել Երևանի քաղաքապետարանի հետ:

Կից ներկայացնում ենք հիմնական մրցատարածությունների փոփոխված երթուղին և երթևեկության ժամանակավոր սահմանափակումների սխեման:

Առաջարկում ենք համատեղ քննարկել ներկայացված տարբերակները և ընտրել միջոցառման իրականացման այն ձևաչափը, որը լավագույնս կհամատեղի միջազգային միջոցառման հաջող անցկացումն ու քաղաքի բնականոն աշխատանքը:

"Arm Marathon" Foundation
Yerevan, Armenia
Tel: +374 55 88 66 37
Email: info@armeniamarathon.org

Հարցերի կամ լրացուցիչ առաջարկների դեպքում սիրով պատրաստ ենք հանդիպել և քննարկել բոլոր մանրամասները:

Սոնա Նահապետյան
«Արմ Մարաթոն» հիմնադրամի գործադիր տնօրեն

"Arm Marathon" Foundation
Yerevan, Armenia
Tel: +374 55 88 66 37
Email: info@armeniamarathon.org

Հավելված 1 ՝ կիսամարաթոնի/մարաթոնի քարտեզ



Google Maps ինտերակտիվ տարբերակը [այստեղ]

ARM MARATHON FOUNDATION

"Arm Marathon" Foundation
Yerevan, Armenia
Tel: +374 55 88 66 37
Email: info@armeniamarathon.org

1- ամբողջ անկյունագծով արգելափակոց

2- միայն մոստի վրա բարձրացողը փակել արգելափակոցով

3 - դեպի Պարոնյան գնացողը փակել

4- Զաքյանի մուտքը փակել արգելափակոցով

5 - փողոցի ամբողջ լայնքը փակել արգելափակոցով

Զաքյան փողոցը մանկական այգու կողքից Ստարտ-ֆինիշ հատված: